

## ԽԱՎԱՐԸ ԵՎ ԼՈՒՅՍԸ ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ

Էռնեստ Հեմինգուեյի կարծ պատմվածքներում հաճախ կարելի է հանդիպել լույսի և խավարի նկարագրությունների: Հոդվածում խոսվում է այն մասին, թե հեղինակն ինչ կերպ և ինչ նպատակով է օգտագործում այդ նկարագրությունները: Ցույց է տրվում, թե ինչպես են Հեմինգուեյի փոքր արձակում հակադրվում լույսն ու խավարը, կյանքն ու մահը: Հոդվածում երևան են գալիս լույս-խավար և կյանք-մահ խորհրդանշային զուգահեռները: Խոսվում է նաև այն մասին, թե հոգեբանական ինչ ազդեցություն են ունեցել խավարն ու գիշերը գրողի անձնական և սրբեղծագործական կյանքի վրա:

**Բանալի բարեր.** խորհրդանիշ, հակադրություն, համադրություն, գիշեր, զգացողություն, լույս, խավար, մահ, կյանք

Էռնեստ Հեմինգուեյի արձակը հարուստ չէ գունային նկարագրություններով, սակայն նրա կողմից օգտագործված գույներն ունենում են էական դեր պատմվածքի իմաստային և ոճական հարթություններում: Հեմինգուեյի գունային ֆոններն ինչ-որ իրի կամ միջավայրի ուղղակի նկարագրություններ չեն. հեղինակը դրանք միշտ օգտագործում է նպատակային: Հեմինգուեյն ամենից հաճախ կիրառում խավարի, լույսի և սովերի նկարագրությունները: Էլ ավելի հաճախ հեղինակը պատկերում է լույսի և խավարի համադրությունն ու հակադրությունը:

Հեմինգուեյի արձակի գլխավոր թեմաներից են կյանքն ու մահը: Եվ այդ հակադրությունն ավելի ակնհայտ դարձնելու համար հեղինակը օգտագործում է լույսն ու խավարը: Սույն հոդվածի նպատակն է մի քանի կարծ պատմվածքների օրինակով ցույց տալու, թե գրողն ինչ կերպ, ոճական ու խորհրդանշային ինչ հնարքներով է կիրառել դրանք, ինչ զուգահեռներ են տարվում խավար-լույս և մահ-կյանք երևույթների միջև:

Էռնեստ Հեմինգուեյի «Քնելուց առաջ» (1927) պատմվածքում գործողությունների մեծ մասը տեղի են ունենում գիշերը, երբ շուրջը խավար է: Խավարն այստեղ առանցքային նշանակություն ունի: Խավարի և դրա հանդեպ նկարագրվող վախի օգնությամբ ենք մենք հասկանում հերոսի ներաշխարհն ու հոգեվիճակը:

Նիք Ադամսը վախենում է գիշերվանից՝ մտածելով, որ խավարում ինքը կմահանա («Երկար ժամանակ ես ապրում էի այն գիտակցությամբ, որ եթե խավարում փակեմ աչքերս և թույլ տամ ինքս ինձ հանգստանա-

լու, հոգիս դուրս կթռչի մարմնիցս») /Hemingway, 1995: 407/: Այսպիսով, խավարը զուգորդումներ է բերում մահվան հետ: Հենց այդ նույն պատճառով Հեմինգուեյի մեկ այլ հերոս՝ նախկինում ինքնասպանություն գործած ծեր մարդը չէր ուզում գնալ «մաքուր ու լուսավոր» վայրից, քանի որ դրսում կատարյալ մթություն էր («Շատ ուշ էր, և բոլորը գնացել էին սրճարանից, բացի ծեր մարդուց, որը նստել էր էլեկտրական սյան առջև գտնվող ծառի տերևների ստվերում») /Hemingway, 1995: 407/:

Հետաքրքրական է, որ, բացի այն հանգամանքից, որ թե՛ Նիքը, թե՛ ծեր մարդը՝ երկուսն էլ վախենում են խավարից, նրանք ևս իրենց փրկությունը տեսնում են լույսի մեջ՝ թեկուզ էլեկտրական («Եթե ես լույս ունենայի, չէի վախենա քնելուց, որովհետև գիտեի՝ հոգիս դուրս կգար մարմնիցս միայն այն ժամանակ, երբ շուրջս խավար լիներ») /Hemingway, 1995: 407/: Լույսն այստեղ հստակ համադրվում է կյանքի հույսի հետ, մինչդեռ խավարը միայն մահ է գուժում: Թե՛ Նիքը, թե՛ «Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր» պատմվածքի հերոսները ցանկանում են ազատվել մթությունից, որը հոգեբանորեն ճնշում է նրանց: Պամելա Բուկերի գրքում նշվում է, որ «Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր» պատմվածքը նման է ավելի վաղ գրված «Քնելուց առաջ» պատմվածքին: Տարիքով մատուցողը հետպատերազմյան Նիքի պես վախենում է քաոսից, մթությունից, մոռացումից, ինքնավստահության պակասից /Boker, 1996: 202/: Երկու հերոսների միջև նմանություն իսկապես կա, սակայն տարբերությունն այն է, որ հոգեպես ու ֆիզիկապես վիրավոր Նիքը դեռ չի կորցրել խավարից փրկվելու հույսը, իսկ ծեր մատուցողը, անջատելով իր համար ժամանակավոր փրկությունը դարձած լույսը, գնում է դեպի խավարը:

«Երբեք չես լինի այդպիսին» պատմվածքում կրկին հանդիպում ենք Նիքին, որն իր մեջ կրում է պատերազմի սարսափները և շարունակում է վախենալ մթությունից ու տանջվել անքնությունից: Այդ մասին նա խոստովանում է իտալացի կապիտանին՝ ասելով, որ չի կարողանում քնել առանց ինչ-որ մի տեսակի վառվող լույսի («Ես լավ եմ: Չեմ կարողանում քնել առանց ինչ-որ մի տեսակի լույսի») /Hemingway, 1995: 407/: Կրկին մթությունն ու լույսը բախվում են իրար: Եվ Նիքը փրկվելու հույսը վերստին տեսնում է լույսի մեջ: Սատյաբրատա Դասը, համեմատականներ տանելով «Երբեք չես լինի այդպիսին» և «Քնելուց առաջ» պատմվածքների միջև, գրում է, որ այս պատմվածքների միջև հիմնական տարբերությունն այն է, որ «Քնելուց առաջ» պատմվածքում հերոսն ամբողջ ժամանակ անկողնում պառկած է և փորձում է արթննի երազով հեռու վանել զոյության սարսափը, իսկ «Երբեք չես լինի այդպիսին» պատմվածքում նա անկողնում չէ, սակայն նրան շարունակում են հետապնդել սարսափները: Բացի այդ՝ հեղինակը նկատում է, որ «Քնելուց առաջ» պատմվածքում՝ դեպքերը տեղին են ունենում մեծ մասամբ գիշերը, իսկ «Երբեք չես լինի այդպիսին» պատմվածքում գործողությունները ծավալվում են ցերեկվա համատարած լույսի ներքո՝ կեսօրի արևի տակ

/Satyabrata, 1996: 15-16/: Հեղինակը ճիշտ է նկատում. պատմվածքում նկարագրվում է լուսավոր, շոգ եղանակ, և հերոսը մահվան, դիակների տեսարանին ականտես է լինում լույսի ներքո: Հեղինակը մի քանի անգամ պատմվածքում նշում է այրող արևի մասին: Սակայն կապիտա-նին վերևում մեր կողմից հիշատակված խոսքից երևում է, որ ցերեկվա սարսափելի տեսարանները կերպարանք են առնում գիշերով ու մթում տանջում հերոսին: Դրա համար Նիքին քնելու համար միշտ վառ լույս է անհրաժեշտ:

Այս պատմվածքում Նիքի հարաբերությունը լույսի և խավարի հետ նման է «Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր» պատմվածքի հերոսների հարաբերությանը: Հստակ զգացվում է, որ Հեմինգուեյի համար մթո-թյունն զուգորդվում էր մահի հետ կամ մահվան հանդեպ վախի հետ:

Սա կարելի է բացատրել գրողի կյանքի ինքնակենսագրական տար-րի տեսանկյունից: Առաջին անգամ Հեմինգուեյը վիրավորվել է գիշերով, երբ մուր էր: Առաջին անգամ մահվանը դեմ առ դեմ հեղինակը կանգնել է կատարյալ խավարի մեջ: Սա չէր կարող ազդեցություն չթողնել հեղի-նակի վրա: Եվ նրա հերոսների՝ մթի հանդեպ վախն ու մթից փախուստի պատճառները հնարավոր է՝ թաքնված են հեղինակի կենսագրության խորքերում:

Հեմինգուեյի արձակում մահվան տիրապետող թեմա լինելու հանգամանքը Ֆիլիպ Յանգը նույնպես կապում էր Հեմինգուեյի՝ 1918-ի պատերազմում վիրավորվելու հետ: Յանգը հեղինակի կյանքի այդ դրվա-զը դարձրեց տեսություն՝ այսպես ասած «Վիրավորման տեսությունը», և Հեմինգուեյի արձակում նկարագրվող մահվան տեսարաններն ու դրա մասին մտորումները վերլուծեց հենց այս տեսանկյունից: Հղում անելով «Մեր ժամանակը» ժողովածուի 6-րդ գլխում հիշատակվող Նիքի Ադամսի ստացած վիրավորումը՝ Յանգը գրում է. «Այս պահից սկսած՝ Հեմին-գուեյի հերոսը խոցված մարդ է» /Wyatt, 2015: 88/:

Այդ «խոցված մարդու» համար իսկական մղձավանջ է մուրը: Նրա հերոսների համար լույսը, բացի կյանքի, ապրելու խորհրդանիշ լինելուց, նաև ինչ-որ առումով հույսի խորհրդանիշ է: Հեմինգուեյի անգամ ամենա-հուսահատ, մահվան շեմին գտնվող կյանքից հիասթափված հերոսները, ինչպիսին են տարիքն առած մատուցողն ու ծեր մարդը, Մանուելը («Անպարտելին»), Հարրին («Կիլիմանջարոյի ձյունները»), միևնույնն է, ցանկանում են ապրել, փորձում են ինչ-որ մի բանում գտնել հույսի մի շող: Մեկն այդ հույսի շողը փնտրում է լույսի մեջ, մյուսը՝ ձյունների, մյուսը՝ ցլամարտի դաշտում: Ամենահիասթափված պահին և մահվան շեմին անգամ Հեմինգուեյի հերոսները հասկանում են կյանքի արժեքը:

Անդրադառնալով «Մահը գրականության մեջ» գրքին՝ մեջբերենք հետևյալ տողերը. «Ծեր մարդը ձգտում էր մաքուր, լուսավոր վայրին, ի դեմս գիշերվա խավարին, որը խորհրդանշում է մահը: «Սուվերի» և «փոշու» հակադրությանը «էլեկտրական լույսի» և «ցերեկային լույսի»

հետ անդրադարձները, օգնում են ստեղծել մահվան միջավայր» /Hakola, 2014: 107/: Հետաքրքրական է, որ լույսին ձգտող ծեր հերոսին հեղինակը պատկերել է սովերում: Սովերներ հանդիպում են հանդերձյալ աշխարհում, և այս դեպքում ծերունու՝ սովերում նստելը խորհրդանշային աղերսներ է տանում մահվան հետ:

Ն. Մեշրամը գրում է, որ «Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր» պատմվածքում վառ ձևով շեշտվում է վախը «nada»-ի՝ ոչնչի հանդեպ, որը պատկերվում է մթության և սովերի միջոցով, որոնք էլ իրենց հերթին արտահայտում են դժոխքի չարիքն ու խավարը, քառսն ու մահը /Meshram, 2002: 59/: Եթե մենք դիտարկում ենք գիշերն ու խավարը՝ որպես մահվան խորհրդանիշներ, ապա լույսը և հերոսի ձգտումը դեպի այն դառնում են կյանքի խորհրդանիշներ:

Այս տեսանկյունից մթան և լույսի հակադրությունը, դրանց խորհրդանշային իմաստը նմանություններ ունի «Հնդկացիների ավանը» պատմվածքի լույսի և խավարի պատկերի հետ: Այնտեղ էլ խավարն ասոցացվում է մահվան հետ, և հնդկացին ինքնասպան է լինում (հետաքրքիր է, որ երկու պատմվածքում էլ կա ինքնասպանության գաղափարը), և առավուտվա լույսի հետ ծնվում է երեխան, որ կյանքի խորհրդանիշն է, Նիքն էլ առավուտյան արևի լույսի տակ որոշում է, որ հավերժ է ապրելու («Արևը դուրս էր գալիս բուրդների հետևից: Վաղ առավուտյան լճի վրա՝ թիավարող հոր կողքին՝ նավախելին նստած, տղան խորապես համոզված էր, որ ինքը երբեք ու երբեք չի մահանալու») /Hemingway, 1995: 407/:

Երկու պատմվածքում էլ կյանքն ու մահը հակադրվում են իրար լույսի և խավարի միջոցով: Միայն թե «Հնդկացիների ավանը» պատմվածքում լույսը բնական է, բնությունից ծնված, իսկ «Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր» պատմվածքում լույսն էլեկտրական է, արհեստական: Դրա համար էլ առաջին պատմվածքում կյանքի խորհրդանիշը, կյանքի գաղափարն ավելի հստակ են արատահայտված, քան երկրորդ պատմվածքում: Երեխայի ծնունդով մենք հասկանում ենք, որ կյանքը շարունակվելու է: Իսկ այս պատմվածքում հերոսները գնում են դեպի խավարը:

«Հնդկացիների ավանը» պատմվածքը բազմաշերտ է, բազմիմաստ, սակայն բոլոր այդ իմաստների հետևում, որպես ֆոն, մշտապես ի հայտ է գալիս կյանքի և մահվան գաղափարը: Այդ իմաստն ավելի շեշտելու համար հեղինակը պատմվածքում ստեղծում է մթի և լույսի հակադրության պատկերներ: Պատմվածքի սկիզբը և նախածննդաբերական հատվածը կատարվում է գիշերը, երբ մութ է ու խավար: Պատմվածքի բոլոր ծանր տեսարանները կատարվում են գիշերով՝ կեսարյան հատում, հնդկացու ինքնասպանություն, Նիքի՝ այդ ամենին ականատես լինելը: Փոլ Սմիթը գրում է, որ հենց դաժան գիշերվա ընթացքում է Նիքը տեսնում առանց ցավազրկման, ծալովի դանակով հոր կատարած

կեսարյան հատումը և կտրված կոկորդով ինքնասպան եղած ամուսնուն /Donaldson, 1996: 48/:

Գիշերվա, խավարի տեսարանների նկարագրություններ կան «Հնդկացիների ավանը» պատմվածքից առաջին տարբերակում, որը հետաքրքիր ձևով լույս է սփռում արդեն վերջնական տարբերակի վրա: Հեմինգուեյը «Հնդկացիների ավանը» պատմվածքից մի մեծ հատված կրճատել է. խոսքը պատմվածքի սկզբի մասին է, հետագայում նրա մահից հետո այդ հատվածը՝ որպես առանձին պատմվածք, տպագրվել է «Երեք կրակոց» անվանումով /Tyler, 2001: 36/: Պատմվածքի այդ կտրված հատվածում խոսվում է նկարագրվող օրվան նախորդող գիշերվա մասին, երբ Նիքը միայնակ էր մնացել մուօ անտառում, մինչ հայրն ու հորեղբայրը ձկնորսության էին: Հենց այստեղ մենք տեսնում ենք գիշերվա հետ կապված նրա բոլոր վախերը («Նախորդ գիշեր վրանում նա ունեցավ վախի նույն զգացողությունը: Այդ զգացողությունը նա ունենում է միայն գիշերով») /Hemingway, 1924: 2/:

Քննադատ Քենեթ Լինն իր «Հեմինգուեյ» գրքում մեջբերում է պատմվածքի կտրված հատվածից այն մասը, երբ հեղինակը նկարագրում է, թե ինչպես է Նիքը վախենում գիշերով մուօ անտառում մենակ մնալուց: Ըստ Լիննի՝ այս հատվածից պարզ է դառնում Նիքի չափազանց խոցելի լինելը մահվան ազդակների առջև /Kenneth, 1995: 46/: Պատմվածքի կտրված հատվածում մահվան և գիշերվա այս կապը շատ բան է բացահայտում «Հնդկացիների ավանը» պատմվածքի իրադարձությունների և հատկապես գիշերվա տեսարանի մասին: Երկու տեղում էլ կա մահվան շունչը. մի տեղում վախ է մահվան հանդեպ, մյուսում հենց մահն է: Դուրս մնացած այդ հատվածը մեզ համար պարզում է, որ Նիքն իր վախը խավարի հանդեպ ձեռք է բերել ոչ թե պատերազմի ընթացքում, այլ շատ ավելի վաղ՝ մանուկ ժամանակ: Այս հանգամանքը հակասության մեջ է մտնում Յանգի այն տեսության հետ, որ մահվան հանդեպ Նիքի բոլոր վախերը գալիս են նրա առաջին վիրավորումից:

Վերադառնալով «Հնդկացիների ավանը» պատմվածքին՝ նշենք, որ բոլոր վերը նշված տեսարաններից հետո մենք տեսնում ենք լուսավոր առավոտ: Ծնվում է երեխան: Մուօ գիշերվանից, խիտ անտառներից, մառախուղից հետո բացվում է լույսը: Պատմվածքի տրամադրությունն անմիջապես փոխվում է: Եթե գիշերն ու խավարն ունեին մահվան խորհրդանշային զուգորդումներ, ապա առավոտը դառնում է նոր կյանքի, ծննդյան խորհրդանիշը:

Որոշ գրականագետներ կարծում են, որ, բացի կյանքի և մահվան խորհրդանիշ լինելուց, լույսն ու խավարը խորհրդանշում են նաև պատմվածքում առկա ռասայական տարբերությունը՝ «խավարում գտնվող», չզարգացած հնդկացիական միջավայրն ու սպիտակամորթների «լուսավոր» քաղաքակրթությունը: Ա. Սթրոնգը գրում է, որ պատմվածքի գործողության վայրն ընդգծում է երկու մշակույթների միջև

եղած ռասայական անհավասարությունը՝ լույսի և խավարի համադրությամբ /Strong, 2008: 18/:

Լույսի և խավարի հակադրությունն աղերսներ ունեն նաև Նիքի ներսում կատարված փոփոխությունների հետ: Ջոն Գարդների գրքում խոսվում է այն մասին, որ Նիքը սկսում է իր ճամփորդություն խավարի մեջ և ավարտում է այն լույսի առաջին շողի հետ /Gardner, 1983: 152/:

Նրա փոքրիկ ճամփորդությունը սկսվեց խավարի մեջ («Երկու նավակն էլ առաջ շարժվեցին խավարի մեջ») /Hemingway, 1995: 407/:

Գիտակցական «խավարի» մեջ էր նաև փոքրիկ Նիքը, որ երբ նստեց նավակ, դեռևս շատ քիչ բան էր հասկանում կյանքի մասին, սակայն երբ երկրորդ անգամ՝ առավոտյան, նստեց նավակ՝ հետ վերադառնալու համար, նրա միտքն արդեն «լուսավորվել» էր, և նա նոր բաներ էր բացահայտել իր համար կյանքի մասին:

Իսկապես, թե՛ ռասայական տարբերությունները, թե՛ Նիքի գիտակցական փոփոխությունն ունեն խորհրդանշային աղերսներ «Հնդկացիների ավանը» պատմվածքում առկա լույսի և խավարի հակադրության հետ, սակայն, միևնույնն է, տիրապետող է մնում այդ հակադրության կյանքի և մահվան խորհրդանշային նշանակությունը:

Ռիչարդ Կ. Փիթերսոնը գրում է, որ գիշերվա և ցերեկի կամ խավարի և լույսի տարբերությունը հաճախ հանդիպող թեմա է Հեմինգուեյի արձակում /Peterson, 1974: 31/:

Քննադատը շատ ճիշտ է նկատում, որ լույսն ու խավարը հենց հակադրությամբ են ավելի հաճախ հանդիպում: Նրա փոքր արձակում, իհարկե, կան խավարի կամ լույսի առանձին նկարագրություններ, սակայն դրանք ամենից հաճախ հանդիպում են միասին:

Հեմինգուեյի հերոսները թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր ու գիտակցական մակարդակում հաճախ գտնվում կյանքի և մահվան սահմանում: Կյանքն ու մահը, դրանց հակադրությունը կարմիր թելի պես անցնում են Հեմինգուեյի արձակում: Եվ եթե անգամ պատմվածքում հաղթում է մահը, մենք հստակ տեսնում ենք հեղինակի և իր հերոսի նախապատվությունը կյանքին, իր կարևորությամբ կյանքի բացարձակ գերակայությունը մահվան հանդեպ:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ Հեմինգուեյը խավարն ու լույսը օգտագործում է ոչ թե որպես ինչ-որ մի բանի անձանցյալ կամ որոշիչ, այլ դրանց դարձնում է պատմվածքի առանձին, ինքնուրույն միավորներ, պատմվածքի հիմնական և երկրորդական իմաստների ուղորդող և բացահայտող: Լույսի և խավարի հակադրությունն ուղիղ համեմատական են կյանքի և մահի հակադրության հեղինակի պատմվածքներում: Առաջին հակադրությունն օգնում է, որպեսզի ավելի պարզ, հասկանալի դառնա երկրորդ հակադրությունը: Խավարն ու լույսը, բացի իրենց առաջնային իմաստից, ձեռք են բերում մեկ այլ տարբերվող իմաստ. և դա մահվան ու կյանքի խորհրդանշային իմաստն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Boker P. A. The Grief Taboo in American Literature: Loss and Prolonged Adolescence in Twain, Melville, and Hemingway. New York and London: NYU Press, 1996.
2. Das S. Ernest Hemingway: The Turning Point. New Delhi: Atlantic Publishers & Distributors, 1996.
3. Donaldson S. The Cambridge Companion to Hemingway // Paul Smith, 1924: Hemingway's Luggage and the Miraculous Year, UK, Cambridge University Press, 1996.
4. Gardner J. M. Between the Thunder and the Sun: An Anthology of Short Stories. New York: Oxford University Press, 1983.
5. Hakola O., Kivistö S. Death in Literature/Deng Tianzhong, Hemingway's Aged Characters as Symbols of Death, UK, Cambridge Scholars Publishing, 2014.
6. Hemingway E. The Short Stories of Ernest Hemingway. New York: Charles Scribner's Sons, 1995.
7. Hemingway E. Three Shots // URL: <https://www.scribd.com/doc/47406327/Hemingway-Three-Shots> (Retrieved July 5, 2011).
8. Kenneth S. L. Hemingway. USA: Harvard University Press, 1995.
9. Meshram N.G. The Fiction of Ernest Hemingway. New Delhi: Atlantic Publishers & Distributors, 2002.
10. Peterson R. K. Hemingway: Direct and Oblique. The Hague: Mouton & Co. N. V., 1974.
11. Strong A., Strong Amy L. Race and Identity in Hemingway's Fiction. New York: Palgrave Macmillan, 2008.
12. Tyler L. Student Companion to Ernest Hemingway. USA: Greenwood Publishing Group, 2001.
13. Wyatt D. Hemingway, Style, and the Art of Emotion. UK: Cambridge University Press, 2015.

**Տ. ԽԱՆԻԿՅԱՆ – Ծառի և լույսի մասին պատմություններ Էրնեստ Հեմինգուեյի –**

Վերջին պատմություններում Էրնեստ Հեմինգուեյի հարմար է հանդիպել լույսի և ծառի մասին պատմությունների. Վերջին պատմություններում Էրնեստ Հեմինգուեյի հարմար է հանդիպել լույսի և ծառի մասին պատմությունների. Վերջին պատմություններում Էրնեստ Հեմինգուեյի հարմար է հանդիպել լույսի և ծառի մասին պատմությունների. Վերջին պատմություններում Էրնեստ Հեմինգուեյի հարմար է հանդիպել լույսի և ծառի մասին պատմությունների.

**Կարևոր բառեր:** սիմվոլ, կոնտրաստ, համադրություն, գիշեր, զգացում, լույս, ծառ, կյանք, մահ

**S. KHANIKYAN – *Dark and Light in Ernest Hemingway’s Short Stories.*** –

Ernest Hemingway's short stories are often a description of light and darkness. The paper discusses how, in what way and in what order the author uses these descriptions. The short prose of Hemingway tries to highlight the contrasts between light and darkness as well as life and death. The symbolic parallels of light and darkness, life and death appear in the paper. It also reflects the psychological effect of the darkness and the night on the writer's personal and creative life.

**Key words:** symbol, contrast, combination, night, feeling, light, darkness, death, life